ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 մարտի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

26
(3235)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՆԽԻԿ ՄԻԼԻՈՆՆԵՐ, ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Կոտայքի մարզպետի տեղակալ Հայկ Մկրտչյանի՝ 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի տարեկան հայտարարագիրը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պաշտոնյայի հայտարարագրում առկա են անշարժ գույք, տրանսպորտային միջոց, խոշոր փոխառություններ կառուցապատող ընկերությունից, բանկային եւ կանխիկ միջոցներ, որոնք կարող են առաջացնել լրացուցիչ հարցեր՝ կապված հնարավոր շահերի բախման եւ կոռուպցիոն ռիսկերի հետ:

Հայկ Մկրտչյանը Կոտայքի մարզպետի տեղակալ է 2022 թվականի հունվարի 11-ից: Մինչ այդ զբաղվել է ինչպես բիզնես գործունեությամբ, այնպես էլ աշխատել է պետական եւ համայնքային կառավարման ոլորտում:

Մասնավորապես՝

- 2007-2014թթ.՝ «Հայկլեռշին» ընկերության համահիմնադիր եւ նախագահ,
- 2019-2020թթ.՝ Արտաշատ ՋՕԸ փոխտնօրեն,
- 2020-2021թթ.՝ Առինջ համայնքի ղեկավարի պաշտոնակատար,
- 2022թ. հունվարի 11-ից՝ Կոտայքի մարզպետի տեղակալ:

Նշենք, որ փոխմարզպետը ակտիվ ՔՊ-ական է: 2023թ. սեպտեմբերին՝ Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության փակ ֆեյսբուքյան խմբում գրառում էր արել՝ խնդրելով ապահովել քարոզարշավի ամփոփիչ հանրահավաքի բազմամարդությունը, եւ Հայկ Մկրտչյանը խոստացել էր ապահովել 25-30 մարդ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը վերջին օրերին փաստացի պասիվացել է սոցիալական ցանցերում այն բանից հետո, երբ հանրությանը ներկայացված տեսանյութում նա հեգնում էր բժշկական հանրույթին: Ռիլը, որը մի քանի օր առաջ համացանցի ուշադրության կենտրոնում էր, ջնջվեց նախարարի պահանջով: Նանուշյանն այժմ միայն պաշտոնական հաղորդագրություններ է կիսվում իր էջում՝ փորձելով այդպես ակտիվություն ապահովել: Նախարարության ներսում պտտվող տեղեկություններով՝ փոխնախարարի դիրքերը թուլացել են, իսկ քաղաքական թիմում ոմանք արդեն նրան համարում են «գնացած»: ՔՊ քաղաքական շրջանակներում Նանուշյանի պահվածքը լավ չի ընդունվել, քանի որ դրանից հետո ավելի է ակտիվացել ընդդիմության քննադատությունը: Հիշեցնենք, որ Լենա Նանուշյանի որդին զինվորական պարտադիր ծառայությունից ազատվել է առողջական խնդիրների պատճառով: Մի երեւույթ, որը մերժում է ՔՊ-ն, բայց հանդուրժում Նանուշյանին:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում մեկնարկել են առաջիկա ընտրությունների նախապատրաստական գործընթացները, եւ արդեն իսկ պարզ է դառնում, որ գործող պատգամավորների մի զգալի հատված հաջորդ խորհրդարանում չի լինի: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրության համաձայն՝ ՔՊ խմբակցության առնվազն 29 պատգամավորներ փաստացի դուրս են մնում հաջորդ խորհրդարանի կազմից: Նրանցից մի մասը հայտարարել է, որ այլեւս չի առաջադրվելու, մի մասին կուսակցությունը թույլ չի տվել մասնակցել ներկուսակցական գործընթացներին, որ համապետական ցուցակում ներառվի, իսկ մի մասն էլ ներկուսակցական ռեյտինգային ցուցակում անգամ առաջին 100-ի մեջ չի ընդգրկվել: «Ժողովուրդ» օրաթերթը ի մի բերեց տվյալները, համաձայն որոնց՝ մի շարք պատգամավորներ ինքնակամ չեն պատրաստվում մասնակցել առաջիկա գործընթացներին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Շնորհակալ ենք ԱՄՆ Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովին Նիկոլ Փաշինյանի կողմից Հայ Առաքելական Եկեղեցու դեմ իրականացվող հարձակումների վերաբերյալ այս խիստ զեկույցը պատրաստելու համար»: Այս մասին գրել է միջազգային փաստաբան Ռոբերտ Ամստերդամը. «Ձեր ուշադրությունն եմ հրավիրում զեկույցում ուշագրավ հատվածի վրա. «2025 թվականի ընթացքում վարչապետ Փաշինյանն առաջարկել է ստեղծել եւ անձամբ նշանակել մի խորհուրդ, որը պետք է ընտրեր ՀԱԵ նոր առաջնորդ, եւ առաջ է քաշել իր օրակարգին հարող հոգեւորականների՝ գործող Կաթողիկոսին գահընկեց անելու նպատակով: Փաշինյանի արշավը Գարեգին Բ Կաթողիկոսի դեմ զուգակցվել է ՀԱԵ հոգեւորականների եւ այն աշխարհիկ անձանց ձերբակալությունների հետ, ովքեր քննադատել կամ քաղաքական ընդդիմություն են դարձել նրա կառավարությանը»:

ԹԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳՈՐԾՈՎ ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՄԵՐ

ArmLur.am-ի տաղավարում հրավիրել ենք փաստաբան Տիգրան Մուրադյանին: 2021 թվականին Սուրմալու առեւտրային կենտրոնում հրդեհ բռնկվեց, իսկ մեկ տարի անց ողբերգական դայթյուն տեղի ունեցավ առեւտրի կենտրոնում: Քրեական վարույթով ոչ հանգամանալից քննության մասին են ահազանգում կողմերը, եւ մենք քննության կոնկրետ ընթացքի մասին խոսեցինք փաստաբանի հետ:

-2021 եւ 2022թթ. գործերը միացվեցին իրար, մեկ վարույթով քննվեցին: Կա գործ դատարանում, որը գնացել է 17 զոհերի, պատասխանատուների մասով, ի՞նչ է կատարվում:

-Տեղեկացնեմ, երբ 2021 թվականին այդ խոշոր պայթյունը տեղի ունեցավ Սուրմալուում, մենք սկսեցինք ուսումնասիրել պայթյունին նախորդած գործողությունները, թե ինչ է կատարվել, մեր երկրում տեսչական մարմինը ինչ ուսումնասիրություններ է կատարել հրդեհային անվտանգությունը պատշաճ գնահատելու հետ կապված: Պարզվեց, որ պայթյունից առաջ հրդեհային մարմինը բազմաթիվ ուսումնասիրություններ է կատարել, սակայն հետեւողական չի եղել, որ իր կողմից արձանագրված խախտումները վերացնեն, այսինքն՝ թեեւ ձեւականորեն արձանագրվել է խախտումների առկայությունը, սակայն դրա կանխարգելման ուղղությամբ գործողություններ չեն կատարվել, եւ այստեղ մեզ մոտ հարց է առաջանում. եթե այդպես է, ասեմ՝ փաստաթղթերով հաստատվում է, որ այդպես է, այդ դեպքում ինչո՞ւ տվյալ անձանց նկատմամբ պատասխանատվության միջոց չի կիրառվել: Ինչո՞ւ նրանց մասով քրեական հետապնդում չի իրականացվում: Ես կարող եմ փաստել, որ երեք տարբեր դիմումներ եւ բողոքներ ներկայացրել ենք թե՛ գլխավոր դատախազին, թե՛ քննչական կոմիտեին, որպեսզի այդ ուղղությամբ պատշաճ իրավական գնահատական տրվի տեսչական մարմնին անփութության ոչ պատշաճ գործողությունների դեմ, սակայն ոչինչ չի ձեռնարկվել: Ավելին ասեմ, երբ 2021 թվականին տեղի ունեցավ այդ հրդեհը, տուժողները դիմել են գլխավոր դատախազությանը, որպես ներկայացուցիչ ես եմ եղել, եւ հայտնել ենք, որ դադարեցրեք Սուրմալու առեւտրային կենտրոնի գործունեությունը, քանի որ այս պայթյունավտանգ, այս հակահրդեհային իրավիճակում չի կարող նման

առեւտրային կենտրոնը գործել: Մեր դիմումների նկատմամբ անհետեւողական մոտեցում է ցուցաբերվել, որից կարճ ժամանակ անց տեղի ունեցավ հաջորդ խոշոր պայթյունը:

-Պարոն Մուրադյան, եւ հրդեհից տուժածները, եւ 17 զոհերի հարազատները փաստացի զրկված են իրենց կրած վնասների մասով փոխհատուցում ստանալուց:

-Տեսեք, այն անձինք, ում նկատմամբ մեղադրանք է առաջադրվել, նրանք իրենց անվամբ ոչինչ չունեն: Օրենքը նախատեսում է, որ իրավաբանական անձի աշխատակցի գործունեությունների համար պատասխանատվությունը կրում է իրավաբանական անձը, այսինքն՝ տվյալ դեպքում պետք է կրեր Սուրմալու առեւտրային կենտրոնը, բայց նրանք մի հնարքի են դիմել՝Սուրմալու առեւտրային կենտրոնի գույքը տարել եւ դրել են մեկ ուրիշ ընկերության վրա, որպեսզի առեւտրային կենտրոնը պատասխանատվություն չկրի: Եւ այս հնարքը կիրառել են վերաքննիչ դատարանի կողմից որոշումը վերացնելու արդյունքում, պետռեգիստրի կողմից այդ գրանցումը կատարելու արդյունքում, քննիչի կողմից ոչ պատշաճ հետեւողականություն ցուցաբերելու արդյունքում, եւ այս ամենի մեջ տուժողների շահերն են անտեսվել:

-Պարոն Մուրադյան, ո՞րն է ելքը:

-Ես կարծում եմ, որ նախ պետք է դատավարությունը առանց ձգձգումների իրականանա, ես մեկ օրինակ եմ ուզում բերել. քրեական գործը քննող դատավորին ներկայացրել ենք գույքային հայց, եւ այդ հայցով մեկ տարի շարունակ ոչինչ չի կատարվել, նույնիսկ այդ հայցով պատասխանողներին ծանուցում չի ուղարկվել մեկ տարի շարունակ:

Ինձ համար դա ուղղակի աբսուրդ է, եւ այս հարցով ես դիմել եմ արդարադատության նախարարությանը, այսինքն՝ մի փոքր գործողությամբ կարելի է բնութագրել գործի քննության ձգձգման ահռելի դրսեւորումները: Եթե այս գործը այդքան ձգձգվի, քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը կլրանա: Եւ նրանց պատճառաբանությունը՝ ծանրաբեռնված ենք, հրդեհի գործը միացել է պայթյունի գործին, դատարանը ուսումնասիրել է գործի նյութերը: Ի վերջո, մեր նպատակը այն է, որ այս հարցին օբյեկտիվ գնահատական տրվի:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՆՈՐՎԵԳԻԱ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում Հայաստանի Հանրապետության եւ Նորվեգիայի Թագավորության արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ կայացել են հերթական քաղաքական խորհրդակցությունները՝ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի եւ Նորվեգիայի ԱԳ նախարարության պետքարտուղար Էյվին Վադ Պետերսոնի գլխավորությամբ: Այս մասին նշված է ԱԳ նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

Զրուցակիցները գոհունակությամբ ընդգծել են վերջին տարիներին Հայաստանի եւ Նորվեգիայի միջեւ շարունակաբար ընդլայնվող քաղաքական երկխոսությունն ու բարձր մակարդակի շփումները՝ երկուստեք նշելով դրանց շարունակական ամրապնդման փոխադարձ պատրաստակամությունը:

Անդրադարձ է կատարվել երկկողմ ոլորտային համագործակցության զարգացմանը վերաբերող մի շարք հարցերի, այդ թվում՝տնտեսական, բարձր տեխնոլոգիաների, կիբեռանվտանգության ոլորտներում փոխգործակցությանը, ինչպես նաեւ բազմակողմ հարթակներում ձեւավորված արդյունավետ համագործակցության խորացմանը:

Ընդգծվել է Նորվեգիայի կողմից Հայաստանին ցուցաբերվող շարունակական աջակցությունը՝ հատկապես հումանիտար կարիքների հասցեագրման եւ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում ՀՀ կարողությունների զարգացման ուղղությամբ:

Կարեւորվել է ՀՀ-ԵՄ գործընկերության ընդլայնումն ու հնարավորությունների լավագույն իրացումը եւ ընդգծվել Նորվեգիայի սերտ գործընկերությունը ԵՄ-ի հետ՝ որպես կարեւոր ուղենիշ ՀՀ-ԵՄ գործընկերության ապագա խորացման համար: Միաժամանակ երկուստեք շեշտվել է Հայաստան-Նորդիկ-Բալթիկ երկրներ ձեւաչափի շրջանակներում համագործակցության հետագա խորացման կարեւորությունը:

Քննարկվել են ընթացիկ տարում Հայաստանում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովին եւ ՄԱԿ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովին (COP17) վերաբերող հարցեր:

Մտքեր են փոխանակվել միջազգային կարեւորություն ունեցող մի շարք հարցերի շուրջ: ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը զրուցակցին է ներկայացրել տարածաշրջանային ընթացիկ զարգացումները՝ այս համատեքստում նաեւ ներկայացնելով վաշինգտոնյան համաձայնություններից հետո Հարավային Կովկասում ընթացող դրական դինամիկան:

Զրուցակիցներն անդրադարձ են կատարել Մերձավոր Արեւելքում ստեղծված իրավիճակին, միջազգային օրակարգի՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցերի:

ՌՈՒԲԻՈՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

Իրաքի վարչապետ Մուհամմադ Շիա աս-Սուդանին ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի հետ հեռախոսազրույցում ընդգծել է, որ Իրաքը չպետք է օգտագործվի որպես տարածաշրջանային պատերազմում հարձակումների հարթակ: Այս մասին հաղորդում է Իրաքի լրատվական գործակալությունը (INA):

Վարչապետն ընդգծել է «հարեւան կամ տարածաշրջանային երկրների դեմ ուղղված որեւէ ռազմական գործողության համար Իրաքի օդային, ցամաքային եւ ջրային տարածքները չօգտագործելու կարեւորությունը»:

Նա շեշտել է Իրաքի հանձնառությունը ռազմական գործողություններին չմասնակցելու՝ երկրի իշխանությունների եւ ժողովրդական, քաղաքական եւ ազգային ուժերի սկզբունքային դիրքորոշմանը:

Սուդանին մերժել է «երկիրը շարունակվող հակամարտությունների մեջ ներքաշելու ցանկացած փորձ», ինչպես նաեւ դատապարտել «իր օդային տարածքի խախտումները որեւէ մեկի կողմից»:

Վարչապետ աս-Սուդանին հաստատել է Իրաքի հանձնառությունն իր տարածքում գտնվող դիվանագիտական առաքելությունները, դեսպանատները եւ հյուպատոսությունները պաշտպանելու հարցում, ինչն «Իրաքի զինված ուժերի բոլոր կազմավորումների հիմնական պարտականությունն է»:

Հեռախոսազրույցի ընթացքում կողմերը քննարկել են տարածաշրջանում ստեղծված իրավիճակը եւ այնտեղ վերջին զարգացումները, ինչպես նաեւ երկկողմ քննարկումներ են անցկացրել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:

Հեռախոսազրույցի մասին ԱՄՆ պետքարտուղարության հայտարարության մեջ նշվում է, որ Ռուբիոն խստորեն դատապարտել է ինչպես Իրանի, այնպես էլ Իրանի հետ կապեր ունեցող աշխարհազորային խմբավորումների հարձակումներն Իրաքում, այդ թվում՝ Իրաքյան Քրդստանում:

ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԹՌԻՉՔ՝ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր՝ մարտի 11-ին, Բանգկոկից Թբիլիսի կիրականացվի չարտերային չվերթ, որը կտեղափոխի Թաիլանդում գտնվող Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիներին: Այս մասին հայտնում է Sputnik Գրուզիա-ն:

Ըստ լրատվամիջոցի տվյալների՝ հատուկ չվերթը կազմակերպվել է այն մարդկանց համար, ովքեր այժմ գտնվում են Թաիլանդում եւ ցանկանում են վերադառնալ Հարավային Կովկաս: Նախատեսվում է, որ ինքնաթիռը Թբիլիսի կհասցնի Բանգկոկում եւ երկրի այլ շրջաններում գտնվող Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիներին:

Նշվում է, որ չարտերային թռիչքը դիտարկվում է որպես ուղեւորների վերադարձի հատուկ չվերթ, քանի որ Բանգկոկի եւ Թբիլիսիի միջեւ կանոնավոր հաղորդակցությունը սահմանափակ է, եւ շատերը ստիպված են լինում տուն հասնել բարդ՝ տրանսֆերային ուղիներով:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ Է ՆԵՏՈՒՄ

Ռուսաստանը խախտում է խաղաղությունը, Չինաստանն՝ առեւտուրը, իսկ ԱՄՆ-ն՝ կանոնների վրա հիմնված միջազգային կարգը, հայտարարել է Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին նա հայտարարել է ԵՄ երկրների դեսպանների առջեւ իր ելույթում, որը հեռարձակվել է X հարթակում նրա էջում: Նա նշել է, որ դժվար է 27 տարբեր երկրների հետ փոխհամաձայնության գալ արտաքին միասնական արտաքին քաղաքականության շուրջ: Միեւնույն ժամանակ, Կոշտայի խոսքով, բազմաշերտ աշխարհը պահանջում է բազմակողմ լուծումներ: «Մենք գիտենք նոր իրականությունը. իրականություն, որտեղ Ռուսաստանը խախտում է խաղաղությունը, Չինաստանը խախտում է առեւտուրը, իսկ Միացյալ Նահանգները մարտահրավեր է նետում կանոնների վրա հիմնված միջազգային կարգին: Այս նոր իրականության մեջ ո՞րը պետք է լինի Եվրամիության առաքելությունը: Նախ, մենք պետք է պաշտպանենք միջազգային իրավունքի վրա հիմնված կանոնները: Մենք պետք է նպաստենք այն սկզբունքների պահպանմանը, որոնք ամրագրված են (ՄԱԿ-ի) Կանոնադրության մեջ եւ շարադրված մեր միջազգային պայմանագրերում»,-ասել է Կոշտան: X-ում մեկ այլ հրապարակման մեջ Կոշտան նշել է, որ Եվրամիությունը միշտ պետք է լինի հուսալի գործընկեր, կանոնների վրա հիմնված միջազգային կարգի պաշտպան եւ ՄԱԿ-ի կանոնադրության պահապանը:

ԿՀԵՏԱՔՆՆԻ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հաղորդագրություններ է ստացել Իսրայելի կողմից Լիբանանում հարվածներ հասցնելիս ֆոսֆորային զինամթերք օգտագործելու մասին եւ կշարունակի հետաքննել իրադրությունը: Այս մասին հայտարարել է Լիբանանում ԱՀԿ ներկայացուցիչ Աբդինասիր Աբուբաքարը Ժնեւում կայացած ճեպազրույցի ժամանակ: «Մենք ստացել ենք այս հաղորդագրությունները: Մենք կապ ենք հաստատել հիվանդանոցների հետ. այս պահին մենք տեղեկություններ չենք ստացել ֆոսֆորի կամ ավելի վաղ այլ քիմիական նյութերի օգտագործման հետ կապված որեւէ վնասվածքի մասին: Մենք հետաքննում ենք այն եւ հետեւում իրադրությանը այդպիսի մարդկանց հայտնաբերելու նպատակով»,-նրա խոսքերն է մեջբերում «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը: Մարտի 6-ին լիբանանյան ռազմական աղբյուրը «ՌԻԱ Նովոստի» գործակալությանը հայտնել էր, որ իսրայելական օդուժը ֆոսֆոր պարունակող արկեր է օգտագործել Լիբանանի հարավի բնակավայրերին հարվածներ հասցնելիս: Մարտի 9-ին Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը հաղորդել է, որ կարողացել է հաստատել Իսրայելի բանակի կողմից ֆոսֆոր պարունակող արկերի օգտագործումը Լիբանանի հարավում:

Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունների մեկնարկից հետո լիբանանյան «Հեզբոլլահ» շարժումը սկսել է հարվածներ հասցնել Իսրայելին, որն էլ պատասխան ռազմական գործողություններ է սկսել Լիբանանում: Երկրում իսրայելական հարվածներից զոհերի թիվը հասել է շուրջ 400-ի:

4 «ՇԱՀԱԾ» ԿԱՆԱՅՔ

«ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ» ՔՊ-Ի ՆԵՐՍՈՒՄ

Armlur.am-ի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում դեռ շարունակվում են բնարկումները կուսակցության ներքին ընտրությունների շուրջ:

Բանն այն է, որ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Դավիթ Դանիելյանի եւ Արմավիրի նախկին փոխմարզպետ Կարեն Գրիգորյանի՝ ընտրություններին միջամտելը լուրջ աղմուկ է բարձրացրել կուսակցության ներսում:

Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ՔՊ վերահսկող հանձնաժողովը տեղեկություններ է ստացել, որ վերոնշյալ անձինք ներքին քարոզարշավը իրականացրել են ոչ այնպես, ինչպես սահմանված էր ՔՊ վարչության որոշմամբ: Մասնավորապես, Դավիթ Դանիելյանն ու Կարեն Գրիգորյանը զանգահարել են ՔՊ պատվիրակներին եւ խնդրել իրենց ձայն տալ:

Պատվիրակները այս մասին տեղեկացրել են ՔՊ վերահսկող հանձնաժողովին, որտեղից էլ տեղեկատվությունը փոխանցվել է կուսակցության վարչությանը: Արդյունքում, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ նրանք երկուսն էլ հեռացվել են թե՛ լավագույն 50-ի ցուցակից, թե՛ ՔՊ-ի 2026 թվականի նախընտրական ցուցակից:

Հիշեցնենք, որ ՔՊ-ի՝ 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների ցուցակի ձեւավորման առաջին փուլի ներքին ընտրությունները տեղի են ունեցել 2026 թվականի փետրվարի 13-15-ը:

Նշենք, որ երկու տղամարդկանց «հեռացումից» շահել են ՔՊ կանայք: Վերջին շարքերում հայտնված մի քանի կին ցուցակում «առաջ» են եկել, քանի որ քվոտայով պետք է ցուցակում ամեն երկրորդը կին լիներ:

ՔՊ-ականների համար անակնկալ է եղել, որ լավագույն 50-յակում է հայտնվել Արփի Դավոյանը, որին չէր հաջողվել հաղթահարել անցողիկ շեմը:

Մենք տեղեկացանք, որ կանանց քվոտայով ՔՊ-ական 4 կանայք ընդգրկվել են ՔՊ ներքին ընտրությունների լավագույն 50-յակում՝ Արաքսյա Վարդանյանը՝ 287 ձայնով, Միլադա Հովհաննիսյանը՝ 286 ձայնով, Լուսինե Բաղալյանը՝ 270 ձայնով եւ Արփի Դավոյանը՝264 ձայնով:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՈՉ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ

Իրանը չի համարում ԱՄՆ-ի հետ հետագա բանակցությունները նպատակահարմար: Այս մասին հայտարարել է Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին: Նա նաեւ նշել է, որ դժվար թե Իրանի նորանշանակ գերագույն առաջնորդ Մոջթաբա Խամենեի օրոք ԱՄՆ-ի հետ բանակցությունների հարցը դիտարկվի: «Մենք բոլորս սպասում ենք նրա՝ Մոջթաբա Խամենեի ելույթներին ու մեկնաբանություններին, որոնք կհաջորդեն ավելի ուշ: Բայց ես չեմ կարծում, որ ամերիկացիների հետ հարցը կլինի կրկին սեղանի շուրջ, քանի որ մենք ամերիկացիների հետ խոսելու շատ դառը փորձ ունենք»,- ասել է Արաղչին:

Իրանի Մեջիլիսի նախագահ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆն էլ իր հերթին ընդգծել է, որ իրենք կտրականապես չեն ձգտում հրադադարի ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ: Նրանք այն կարծիքին են, որ ագրեսորը պետք է ապտակ ստանա, որպեսզի դաս քաղի եւ այլեւս չմտածի Իրանի վրա գրոհելու մասին:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն էլ իր խորհրդականների միջոցով հայտարարել է, որ կաջակցի Մոջթաբա Խամենեիին լիկվիդացնելու գաղափարին, եթե նա չհամաձայնի զիջումների գնալ ԱՄՆ-ին:

Տեղեկացնենք, որ արդեն 12-րդ օրն է, ինչ Իսրայելը ԱՄՆ-ի հետ համատեղ գործողություններով հրթիռակոծության տակ է պահում Իրանի ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական օբյեկտներ: Իսրայելն օրերս նաեւ հարվածել էր Թեհրանի «Շահրան» նավթապահեստարանը:

Ի պատասխան Իսրայելի եւ ԱՄՆ-ի այս քայլին՝ Իրանի ՌՕՈՒ-ն հարվածային անօդաչու թռչող սարքերով թիրախավորել է Իսրայելի Հայֆա քաղաքում գտնվող նավթագազային վերամշակման գործարանը եւ վառելիքի ռեզերվուարները:

Հիշեցնենք, որ փետրվարի 28-ի առավոտյան Իսրայելը ԱՄՆ-ի հետ համատեղ պատերազմական գործողություններ սկսեց Իրանի դեմ: Պատերազմը ծանր նյութական եւ մարդկային կորուստներով շարունակվում է առ այսօր:

ՓԱԹԵԹԻՑ ՀԱՆԵԼ Է

Եվրամիությունը Վրաստանի Կուլեւիի նավահանգիստը հանել է Ռուսաստանի դեմ պատրաստվող պատժամիջոցների 20-րդ փաթեթից, քանի որ այն չի խախտել պատժամիջոցների ռեժիմը: Այս մասին հաղորդում է Georgia Today պարբերականը՝ վկայակոչելով ԵՄ պատժամիջոցների հարցերով հատուկ ներկայացուցիչ Դեւիդ Օ'Սալիվանի նամակը՝հասցեագրված Վրաստանի արտաքին գործերի նախարար Մակա Բոճորիշվիլիին: Ըստ նամակի՝ի սկզբանե նախատեսվում էր Վրաստանի Կուլեւիի նավահանգիստը ներառել պատժամիջոցների 20-րդ փաթեթում՝ ռուսական նավթի ծովային փոխադրումների եւ նավահանգիստ «ստվերային նավատորմի» մուտքի պատճառով»:

Օ'Սալիվանի խոսքով՝ «դիրքորոշումը վերանայվել է» այն բանից հետո, երբ Վրաստանի իշխանությունները եւ նավահանգստի օպերատորը ստանձնել են մի շարք պարտավորություններ: Մասնավորապես, նրանք մտադիր են թույլ չտալ Եվրամիության պատժամիջոցների տակ գտնվող նավերի մուտքը նավահանգիստ եւ դրանց սպասարկումը: Նաեւ պարտավորություններ է ստանձնել Ադրբեջանի SOCAR ընկերությունը, որը նավահանգստի օպերատորն է: Այն մտադիր է պահպանել ռուսական նավթի համար ԵՄ-ի կողմից սահմանված գնի վերին շեմը:

Օ'Սալիվանը հավելել է, որ առաջիկա 20-րդ փաթեթում ԵՄ-ն նախատեսում է 40 լրացուցիչ նավ ներառել պատժամիջոցների ցանկում: Արդեն իսկ ԵՄ-ի սեւ ցուցակում կա 605 նավ:

Reuters գործակալությունն ավելի վաղ հայտնել էր, որ պատժամիջոցների 20-րդ փաթեթի շրջանակներում ԵՄ-ն մտադիր է առաջին անգամ պատժամիջոցներ սահմանել երրորդ երկրների՝ Ինդոնեզիայի եւ Վրաստանի նավահանգիստների դեմ՝ ռուսական նավթի հետ կապված գործառնությունների համար: Խոսքը վերաբերում էր նաեւ Կուլեւիի տերմինալին, որը գտնվում է Վրաստանի արեւմուտքում՝ Սեւ ծովի ափին:

ԴՈՒՐՍ Է ԲԵՐԵԼ

Գերմանիան Բաղդադում գտնվող իր դեսպանատան աշխատակիցներին ժամանակավորապես դուրս է բերել Իրաքից՝ Մերձավոր Արեւելքում հակամարտությունից առաջացած անվտանգության մեծ ռիսկերի պատճառով: Ինչպես տեղեկանում ենք France 24-ից, այս մասին մարտի 9-ի ուշ երեկոյան հայտարարել է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության խոսնակը:

«Բաղդադում Գերմանիայի դեսպանատան անձնակազմը ժամանակավորապես տեղափոխվել է Իրաքից՝ վտանգավոր իրավիճակի պատճառով»,- հայտնել է խոսնակը՝ հավելելով, որ աշխատակազմի անվտանգությունն անընդհատ գնահատվում է:

ՀԱՅՏՆԻ Է

ԿԱՍԿԱԾՅԱԼԸ՝ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ հայտնի է ԱԱԾ շենքը հրկիզած անձի ինքնությունը: Վերջինս Բաֆֆի Մ-ն է: Նրա կալանքի միջնորդության որոշումը մակագրվել է Երեւան քաղաքի դատարանի դատավոր Մանվել Շահվերդյանին, որն էլ բավարարել է նախաքննական մարմնի միջնորդությունը:

Հայտնել էինք, որ դեպքից հետո Ազգային անվտանգության ծառայության շենքը ուժեղացված հսկողության տակ է: ArmLur.am-ը գնացել էր դեպքի վայր, սակայն ԱԱԾ աշխատակիցները թույլ չտվեցին դեպքի վայրը նկարահանել՝ նշելով, որ այն հատուկ պահպանվող տարածք է:

Քննչական կոմիտեից ArmLur.am-ին պաշտոնապես հայտնել էին, որ քրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ ահաբեկչություն.

1. Պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը կամ դրա իրական սպառնալիքը կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը՝զուգորդված քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետեւանք առաջացնելու վտանգով, որի նպատակն է բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելը, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելը, հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որեւէ արարք կատարելուն կամ հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելը, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերով ահաբեկչություն համարվող ցանկացած այլ արարք՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Հիշեցնենք, որ մարտի 6-ին ԱԱԾ շենքի վրա վառվող առարկաներ նետելու կասկածանքով ձերբակալվել է մեկ անձ: Մեզ հայտնի էր դարձել, թե ձերբակալված անձը կոնկրետ ինչ է նետել ԱԱԾ շենքի վրա ու ցանկացել հրկիզել ԱԱԾ շենքը: Մասնավորապես, ձերբակալված անձը շենքի վրա նետել է Մոլոտովի կոկտեյլ, հայտնի նաեւ որպես բենզինով պայթուցիկ, շառումբ, աղքատի նռնակ, կրակային պայթուցիկ կամ պարզապես Մոլոտով: Անվանումն օգտագործվում է մի շարք ինքնաշեն, հրդեհ առաջացնող պայթուցիկ նյութերի համար: Վերջինս կալանավորվեց:

Իսկ ով է դատավոր Մանվել Շահվերդյանը

Նրա վարույթում է քննվել 44-օրյա պատերազմում զոհված Ժորա Մարտիրոսյանի մոր՝ Գայանե Հակոբյանի դատավարությունը: Նա մեղադրվում է վարչապետի որդուն առեւանգելու համար: 2021 թվականին հրապարակվեց այն մասին, որ դատավորին խորհրդակցական սենյակից առեւանգել եւ պահել են ԱԱԾ-ում, սակայն դատավորը վստահեցրել էր, որ տեղեկությունները որեւէ աղերս չունեն իրականության հետ: Մանվել Շահվերդյանը նաեւ քաղբանտարկյալներ Նարեկ Սամսոնյանի եւ Վազգեն Սաղաթելյանի գործերը քննող դատավորն է, որը վերջիններիս կալանքները 3 ամսով երկարաձգել է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ԿԱՇԱՌՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պաշտոնատար անձինք, օգտագործելով իրենց ծառայողական լիազորությունները, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ ստացել են առանձնապես խոշոր չափերի կաշառք:

Մասնավորապես, համալսարանի պրոռեկտորի պաշտոնը զբաղեցրած անձը, ռեկտորի իմացությամբ, տրանսպորտային բաժնի պետին եւ համալսարանի ենթակայությամբ գործող «Աղավնաձոր» ուսումնական բազայի տնօրենին առաջարկել է «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի եւ բազայի կանոնադրությամբ սահմանված կարգի խախտմամբ հյուրերի ընդունման, նրանց հանգստի կազմակերպման, վերջիններից ստացված եւ հիմնադրամի հաշվեկշռում մուտքագրված գումարները տնօրինելու դիմաց իրեն եւ ռեկտորին կաշառք տալ:

Վերը նշված պաշտոնատար անձինք կաշառք են պահանջել եւ ստացել նաեւ հիմնադրամի հաշվեկշիռ մուտքագրման ենթակա վարձավճարներ տնօրինելու, հիմնադրամի կողմից ստեղծված ՍՊ ընկերությունը ապօրինի ղեկավարելու եւ դրա գործունեության արդյունքում ստացված գումարները տնօրինելու, համալսարանի աշխատակիցներին համատեղությամբ այլ պաշտոնի նշանակելու եւ մի շարք այլ հանցավոր գործողություններ կատարելու դիմաց:

Հիշյալ գործողությունների արդյունքում՝ համալսարանի պաշտոնատար անձինք որպես կաշառք ընդհանուր ստացել են առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 18 միլիոն ՀՀ դրամ գումար: Բացի այդ, նախաքննության ընթացքում հայտնաբերվել են ռեկտորի եւ պրոռեկտորի կողմից իրենց իշխանական եւ ծառայողական լիազորությունները չարաշահելու հետեւանքով շուրջ 12 միլիոն ՀՀ դրամի գումարի հափշտակության դեպքեր: Արդյունքում՝ շուրջ 30 միլիոն ՀՀ դրամ չի մուտքագրվել համալսարանի հաշվեկշիռ:

Համալսարանի ռեկտորին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (5 դրվագ), 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով (5 դրվագ), 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Պրոռեկտորին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (5 դրվագ), 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով (5 դրվագ), 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 2 դրվագ 445-րդ հոդվածի 2-րդ մասով: Համալսարանի եւս 8 աշխատակիցների մեղադրանքներ են ներկայացվել կաշառք տալու, կաշառք ստանալուն օժանդակելու եւ խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում բացահայտվել է 2026 թվականի մարտի 8-ին Քանաքեռ-Զեյթունում տեղի ունեցած սպանության դեպքը:

Մասնավորապես, նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ տուժողը 2026 թվականի մարտի 8-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի շենքերի հատվածում վիճաբանել է ընկերոջ՝Ա.Ս.-ի հետ, որի ընթացքում վերջինս իր մոտ գտնվող դանակով երկու անգամ հարվածել է տուժողի մեջքի եւ որովայնի հատվածին՝ սպանելով նրան, այնուհետեւ դիմել է փախուստի:

Ա.Ս.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությունը):

2026 թվականի մարտի 9-ին առերեւույթ սպանություն կատարած անձը ձերբակալվել, այնուհետեւ կալանավորվել է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի եղբորը՝ Ալեքսանդր Սարգսյանին կալանավորելու որոշում է կայացրել Հակակոռուպցիոն դատարանը: Տեղեկությունը հաստատեց Հակակոռուպցիոն դատարանի մամուլի խոսնակ Արմինե Նովրուզյանը՝ նշելով, որ նախաքննական մարմինը կալանքի միջնորդություն է ներկայացրել փետրվարի 24-ին. դատավոր Սարգիս Պետրոսյանը բավարարել է միջնորդությունը:

«Նախաքննական մարմինը 2026 թվականի փետրվարի 24-ին միջնորդություն է ներկայացրել դատարան կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

Նույն օրը դատարանը, մեղադրյալի գտնվելու վայրը հայտնի չլինելու պայմաններում քննարկելով վերը նշված միջնորդությունը, փախուստը կանխելու հիմքը բարձր գնահատելով, բավարարվել է այն եւ կիրառել կալանքը: Ա. Սարգսյանին հայտնաբերելու եւ ՀՀ իրավասության ներքո գտնվելու դեպքում վերջինիս կալանքի հարցը կրկին քննարկվելու է դատարանի կողմից»,- հայտնեցին դատարանից:

Ալեքսանդր Սարգսյանը մեղադրվում է առանձնապես խոշոր չափերով վատնում կատարելու մեջ:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Հրազդան քաղաքի բնակիչ 42 եւ 47 տարեկան երկու տղամարդիկ կատարում են բնակարանային գողություններ: Տեղեկությունը ստուգվեց, հաստատվեց եւ նախապատրաստական որոշակի գործողություններից հետո իրացվեց Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողների հետ համատեղ: Փետրվարի 27-ին՝ կեսգիշերից քիչ անց, հերթական բնակարանային գողությունը կատարելուց հետո Հրազդանի Չարենցի փողոցում տղամարդիկ ձերբակալվեցին եւ իրենց վարած «Ռենո» մակնիշի մեքենայով հանդերձ տեղափոխվեցին Կոտայքի մարզային վարչություն: Հատուկ պահպանվող տարածքում մեքենան կնիքվեց:

Երկուսն էլ կազմված փաստաթղթերով ներկայացվել են Կոտայքի մարզային քննչական վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ: Տղամարդիկ խոստովանեցին իրենց կատարած բնակարանային գողության 22 դրվագ: Պարզվեցին նաեւ գողոնը պահելու վայրերը, իսկ վերջին դրվագով Հրազդանի Մաքրավան թաղամասում գողացվածը հայտնաբերվել է «Ռենո» մակնիշի մեքենայում:

Պարզվել է, որ տղամարդիկ գողություններ են կատարել ոչ միայն Կոտայքի մարզում, մասնավորապես Հրազդան քաղաքում, Չարենցավանում, Աղավնաձորում, Առինջում, այլեւ Գեղարքունիքում՝ Լճափ, Չկալովկա եւ Նորաշեն գյուղերում: Տարել են կենցաղային իրեր, էլեկտրական սարքեր ու տարբեր գործիքներ, խմիչք եւ այլն:

Դատարանի որոշմամբ երկուսի նկատմամբ էլ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հանրապետությունում մարտի 6-ից 9-ը հայտնաբերվել է 24 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 1-ը:*

ՄԱՐԶ

ԽՈՍՏԱՑԵԼ ԵՆ ՓՈԽԵԼ

Տավուշի սահմանամերձ Ոսկեպար, Ոսկեվան, Բաղանիս, Կիրանց գյուղերի բնակիչներին հայտնել են, որ առաջիկայում իրենց առանձնատների տանիքների շիֆերներով ծածկը փոխելու են, տեղադրվելու են նոր, մետաղաթիթեղյա ծածկեր: Գյուղերի վարչական ղեկավարներից տեղեկացա՝ սկզբից հայտնել են, որ փոխելու համար պետք է հաշվառել միայն առանձնատների ծածկի շիֆերների մակերեսը, սակայն հետո պահանջել են նաեւ տներին կից պահեստների, ախոռների (գոմերի) շիֆերների ծածկի ընդհանուր մակերեսի տվյալները: Այդ տվյալները ուղարկվել են Տավուշի մարզպետարան:

Գյուղերում բնակիչներ կան, որոնք որոշել էին սեփական միջոցներով փոխել իրենց տների ծածկը, սակայն լսելով, որ նման ծրագիր է իրականացվելու, սպասում են դրան: Բնակիչներին հայտնել են, որ շիֆերների մեջ ասբեստ կա, որը քաղցկեղածին է, ուստի պետք է փոխարինել թիթեղներով: Գյուղացիները տարակուսած են՝ եթե շիֆերները քաղցկեղ են առաջացնում, ինչո՞ւ նախկինում, տասնամյակներ շարունակ այդ մասին չէին հայտնում: Ուշագրավ է, որ վերոհիշյալ գյուղերը տուժել են 2024թ.-ին սահմանազատման անվան տակ, միակողմանի կերպով Ադրբեջանին տարածքներ, պաշտպանական դիրքեր հանձնելու հետեւանքով:

ԱԺ ընտրություններից 3 ամիս առաջ իրականացվող այդ ծրագիրը պատահական չէ: Պատահական չէ այն, որ իշխանությունը որոշել է, ինչ-որ փոփոխություններ կատարելով, վերսկսել սահմանամերձ գյուղերում պետական աջակցությամբ, վարկային միջոցներով 16 եւ 21 միլիոն դրամ արժեքով առանձնատների կառուցման ծրագիրը: Մարտի 5-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ առաջադրելով հետեւյալ հարցերը. «Տավուշի մարզի ո՞ր գյուղերում, առանձնատների եւ այլ կառույցների ծածկի ընդհանուր քանի՞ քմ մակերեսով ազբոշիֆեր եք նախատեսում փոխել: Որքա՞ն է այդ ծրագրի արժեքը, ո՞վ է ֆինանսավորողը, ե՞րբ է մեկնարկելու այդ ծրագիրը, ե՞րբ է ավարտվելու, ո՞վ է իրականացնելու տանիքների ծածկի փոխարինման աշխատանքները»: Տավուշի մարզպետի աշխատակազմից դեռեւս պատասխան չեմ ստացել:

ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ ՇՈՒԿԱ ՉԿԱ

Դիլիջան քաղաքում եւ Դիլիջան համայնքի 6 գյուղերում գյուղատնտեսական շուկա չկա, գյուղմթերքներ վաճառում են տուրիստական Դիլիջան քաղաքի կենտրոնում կայանող բեռնատար եւ մարդատար ավտոմեքենաներից: Դա հարիր չէ տուրիստական Դիլիջանի դիմագծին: Դիլիջանում հրատապ խնդիր է գյուղատնտեսական շուկայի գործարկումը, որտեղ իրենց աճեցրած գյուղմթերքները կվաճառեն Դիլիջան քաղաքի եւ համայնքի գյուղերի բնակիչները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՆՉՈ՞Ւ Է ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳՆՈՒՄ ԴԱՍԻ

Մի քանի օր է, ինչ Նիկոլ Փաշինյանը երեկոյան կադրեր է հրապարակում, թե ինչպես է գնում ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, մասնակցում վերապատրաստման դասընթացների:

ArmLur.am-ի աղբյուրների հաղորդմամբ՝ կրթության նկատմամբ այս վերաբերմունքը ոչ թե «կրթվելը նորաձեւ» է թրենդի մեջ է, այլ անցած տարեվերջին ստացած պարգեւավճարի պայմաններից մեկը:

ArmLur.am-ի կառավարական աղբյուրները փոխանցում են, որ մոտ 14 միլիոն դրամ պարգեւավճար ստանալը եղել է կոնկրետ պայմանով, որ պետական պաշտոնյաները 7-10 մլն դրամական պարգեւներից պետք է մաս առանձնացնեն վերապատրաստման դասընթացների, կրթական որեւէ ծրագրի վրա:

Հիշեցնենք, որ հրապարակված տարբեր տվյալների համաձայն՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը միայն 2025-ի առաջին կեսին ստացել է մոտ 11.95 մլն դրամ պարգեւավճար, իսկ առանձին կատեգորիայով եւս մոտ 1.97 մլն դրամ հավելավճար, ընդհանուր՝ մոտ 14 մլն դրամ: Այժմ, ըստ ArmLur.am-ի աղբյուրների, այդ «գիտելիքահեն ներդրման» շրջանակում վարչապետը երեկոյան ժամերին հաճախում է ակադեմիա՝ դասի:

Ի դեպ, կառավարական համակարգում խոսում են, որ առաջիկայում դասի նստած պաշտոնյաների թիվը կարող է ավելանալ. չի բացառվում, որ գործադիրի տարբեր ներկայացուցիչների էլ տեսնենք վերապատրաստման դասընթացներին՝ միգուցե նույնիսկ սոցցանցերում ռիլերով «ուսանողական կյանք» ցուցադրելիս:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՄԵՂՄԱՑՆԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՄՆ իշխանությունները պատրաստ են ժամանակավորապես մեղմացնել նավթի հետ կապված պատժամիջոցները մի շարք երկրների նկատմամբ: Այս մասին հայտարարել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը:

«Մենք ժամանակավորապես կիրաժարվենք նավթի հետ կապված պատժամիջոցներից՝ գինը նվազեցնելու համար: Որոշ երկրների նկատմամբ պատժամիջոցներ են գործում: Մենք կդադարեցնենք այդ պատժամիջոցները, մինչեւ այս հարցը կարգավորվի: Եւ ո՞վ գիտի, գուցե հետագայում անհրաժեշտ չլինի վերականգնել այդ պատժամիջոցները, որովհետեւ խաղաղ է լինելու», - ասել է Թրամփը մամուլի ասուլիսում, որի տեսանյութը տարածել է Fox News-ը:

Նա նշել է, որ ԱՄՆ ռազմածովային ուժերը եւ նրա գործընկերները կուղեկցեն նավերը Հորմուզի նեղուցով, եթե դրա կարիքը լինի:

Մարտի 7-ին ԱՄՆ ֆինանսների նախարար Սքոթ Բեսենթը հայտարարել էր, որ նավթի շուկայում լարվածությունը մեղմելու համար Վաշինգտոնը կարող է որոշում ընդունել հետագայում ռուսական նավթի դեմ պատժամիջոցները մեղմացնելու մասին:

Ավելի վաղ՝ մարտի 6-ին, Բեսենթը հայտարարել էր, որ ԱՄՆ ֆինանսների նախարարությունը Հնդկաստանին ժամանակավորապես թույլատրել է 30 օրով գնել ռուսական նավթը, որն արդեն գտնվում է ծովում:

Նավթի գինը կտրուկ բարձրացել է Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի մեկնարկած ռազմական գործողությունների եւ Մերձավոր Արեւելքի երկրներում էներգետիկ օբյեկտների եւ ամերիկյան ռազմակայանների ուղղությամբ Իրանի պատասխան հարվածների ֆոնին: Բացի այդ, դադարել է նավագնացությունը Հորմուզի նեղուցով, որով անցնում է նավթի համաշխարհային մատակարարումների շուրջ մեկ հինգերորդը:

ԺԱՄԱՆԵԼ Է ԿԻՊՐՈՍ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը ժամանել է Կիպրոս՝ Մերձավոր Արեւելքում հակամարտության պատճառով կղզու անվտանգության շուրջ մտահոգությունների ֆոնին: Այս մասին հաղորդում է France 24-ը: Նա այնտեղ հանդիպում է ունեցել երկրի նախագահ Նիկոս Քրիստոդուլիդեսի եւ Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի հետ:

Ֆրանսիայի ղեկավարը նշել է, որ հարձակումը Կիպրոսի վրա հարձակում է ամբողջ Եվրոպայի վրա: Մարտի 2-ին Կիպրոսի Ակրոտիրիի բրիտանական ռազմակայանը անօդաչու թռչող սարքի հարձակման էր ենթարկվել, պատճառվել էր նյութական վնաս: Այս միջադեպից հետո եվրոպական մի քանի երկիր հայտարարել են Կիպրոս ռազմանավեր ուղարկելու մասին՝ կղզին պաշտպանելու համար:

Ավելի վաղ Իրանի ԱԳՆ-ն հերքել էր երկրի առնչությունը Կիպրոսում բրիտանական ռազմաբազայի վրա հարձակմանը:

Կիպրոսի նախագահ Քրիստոդուլիդեսն էլ հայտարարել է, որ երկիրը չի ներքաշվի որեւէ ռազմական գործողության մեջ՝ կապված Իրանի շուրջ հակամարտության հետ, այլ կկենտրոնանա իր հումանիտար դերի վրա:

Իր հերթին, Reuters գործակալությունը հաղորդում է, որ Կիպրոսում Մակրոնը նաեւ հայտարարել է Կարմիր ծով երկու ֆրեգատ ուղարկելու մասին՝ որպես 2024թ. Եվրամիության մեկնարկած «Վահաններ» գործողության մի մաս, որի առաքելությունն էր Կարմիր ծովում միջազգային նավագնացության պաշտպանությունը Եմենի հութիների հարձակումներից: «Մենք զուտ պաշտպանական, զուտ ուղեկցող առաքելություն ստեղծելու գործընթացում ենք, որը պետք է պատրաստվի ինչպես եվրոպական, այնպես էլ ոչ եվրոպական երկրների հետ համատեղ», - ասել է Մակրոնը:

● *Հանրապետությունում մարտի 6-ից 9-ը հայտնաբերվել է թմրանյութի 33, ֆիզիկական ներգործության եւ հոգեկան ներգործության 21-ական դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՀԵՏԱՁԳԵԼ ԵՆ

Լիբանանի խորհրդարանը երկու տարով հետաձգել է 2026թ. մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրությունները: Այս մասին հաղորդում է Al Jazeera-ն:

Լիբանանի խորհրդարանի խոսնակի հայտարարության համաձայն՝ ընտրությունները հետաձգվել են Իսրայելի եւ «Հեզբոլլահ» խմբավորման միջեւ պատերազմի պատճառով:

Լիբանանի Ազգային լրատվական գործակալության (NNA) տեղեկացմամբ՝ մարտի 9-ին օրենսդիրներն ընտրությունների հետաձգման շուրջ քվեարկել են 76 կողմ, 41 դեմ եւ 4 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

Խորհրդարանում «Հեզբոլլահ»-ի 13 անդամից բաղկացած դաշինքը քվեարկել է երկարաձգման օգտին:

Հակամարտությունն Իսրայելի հետ պատճառ է հանդիսացել ավելի քան կես միլիոն մարդու տեղահանման, ինչն էլ դժվարացրել է քվեարկության կազմակերպումը երկրի մեծ մասում:

Իսրայելի եւ «Հեզբոլլահ»-ի միջեւ ռազմական գործողություններ են սկսվել Իրանի դեմ փետրվարի 28-ին ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից մեկնարկած հակամարտության ֆոնին: Լիբանանը հայտնել է, որ մարտի սկզբից Իսրայելի հարվածների հետեւանքով զոհերի թիվը գերազանցել է 400-ը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՏԻԺ՝ ՍԱՐԿՈԶԻԻՆ

Ֆրանսիական լրատվամիջոցները հաղորդում են, որ Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին կարող է կրկին բանտարկվել իր գործերից մեկի վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

Mediapart-ի փոխանցմամբ՝ մարտի 9-ին Փարիզի դատարանը մերժել է Սարկոզիի՝ այսպես կոչված «պատիժների համախմբման» խնդրանքը:

Ֆրանսիայի նախկին նախագահը խնդրել է միաժամանակ կատարել իր դեմ մի քանի դատական որոշումներ, ինչը կխուսափեր լրացուցիչ բանտարկությունից: Սակայն դատարանը մերժել է այս խնդրանքը:

TF1-ի փոխանցմամբ՝ դատարանի մերժումից հետո Սարկոզին ստիպված կլինի առանձին պատիժ կրել այսպես կոչված «Բիգմալիոնի» գործով, որը կապված է իր 2012 թվականի ընտրարշավի անօրինական ֆինանսավորման հետ: Այս դեպքում նա դատապարտվել է մեկ տարվա ազատազրկման, որից վեց ամիսը՝ իրական:

IDBANK

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ LOS ANGELES TIMES-ԻՆ

Ամերիկյան հեղինակավոր Los Angeles Times դարբերականը անդրադարձել է հայկական IDBank-ին՝ ներկայացնելով բանկի արագ զարգացումը, թվային վերափոխման հաջող փորձը եւ միջազգային ընդլայնման նոր փուլը:

Հրապարակման մեջ նշվում է, որ վերջին տարիներին Հայաստանը հայտնվել է միջազգային ներդրողների ուշադրության կենտրոնում, իսկ երկրի բանկային համակարգը դիտարկվում է որպես կայունության եւ վստահության կարեւոր հենասյուն: Այդ գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է գրավել IDBank-ը՝ որպես տեխնոլոգիական լուծումների եւ ֆինանսական նորարարությունների առաջատարներից մեկը:

«Մենք տեսնում ենք աճող հետաքրքրություն ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների կողմից, որոնք ոգեշնչված են ապագա կայունության եւ նոր տնտեսական հնարավորությունների հեռանկարով», - նշել է IDBank-ի Վարչության նախագահ Միեր Աբրահամյանը Los Angeles Times-ին տված հարցազրույցում ընդգծելով նաեւ բանկի վերջին տարիների արագ աճն ու զարգացման ռազմավարությունը:

IDBank-ի միջազգային զարգացման կարեւոր քայլերից մեկը դարձել է ԱՄՆ մուտքը: Բանկը ստացել է թույլտվություն՝ Միացյալ Նահանգներում ներկայացուցչություն բացելու համար: Այն արդեն սկսել է գործել Գլենդել քաղաքում՝ աշխարհի ամենամեծ հայկական համայնքներից մեկի կենտրոնում:

Los Angeles Times-ը գրում է, որ այս ներկայացուցչությունը կարող է դառնալ կարեւոր ֆինանսական կամուրջ Հայաստանի եւ սփյուռքի միջեւ՝ ամրապնդելով երկրի կապը միջազգային շուկաների հետ: ԱՄՆ-ում գործող գրասենյակը կներկայացնի IDBank-ի ծառայությունները՝ հնարավորություն տալով հետաքրքրված անձանց ավելի հեշտությամբ օգտվել բանկային առաջարկներից. օրինակ՝ հեռավար բացել հաշիվ, ձեռք բերել անշարժ գույք Հայաստանում կամ օգտվել այլ ֆինանսական ծառայություններից:

Հոդվածում հատուկ ընդգծվում է նաեւ բանկի թվային ռազմավարությունը: Միեր Աբրահամյանի խոսքով՝ թվային հասանելիությունը եղել է IDBank-ի հաջողության առանցքային գործոնը. «Հայաստանի քաղաքացիները, նույնիսկ նրանք, ովքեր բնակվում են արտերկրում, կարող են դառնալ բանկի հաճախորդներ 100% առցանց եղանակով»:

Վերջին տարիներին IDBank-ը զգալի ներդրումներ է կատարել տեխնոլոգիաների, թվային հարթակների եւ մարդկային ռեսուրսների զարգացման մեջ՝ ընտրելով օրգանական աճի մոդել: Արդյունքում բանկի ակտիվ հաճախորդների թիվն ընդամենը հինգ-վեց տարվա ընթացքում աճել է 10 հազարից մինչեւ շուրջ 400 հազար:

IDBank-ն այսօր ոչ միայն հաջողված բանկային բրենդ է Հայաստանում, այլեւ օրինակ, թե ինչպես կարող է տեխնոլոգիաների եւ նորարարության վրա հիմնված ֆինանսական հաստատությունը դուրս գալ միջազգային հարթակ եւ ամրապնդել Հայաստանի կապը համաշխարհային ֆինանսական համակարգի հետ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԱՇԽԱՐՀ

ՀԱՄԱԿԱՐԾԻՔ ՉԵՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտնել է, որ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը «պակաս ոգեւորված» էր Իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելու հեռանկարներով: Այնուամենայնիվ, նախագահը նշել է, որ Վենսը «շատ լավ լեզու է գտնում» իր հետ այս հարցում: Այս մասին Թրամփն ասել է Ֆլորիդայում կայացած մամուլի ասուլիսում, որը հեռարձակել է Fox News-ը:

«Մենք այս հարցում լավ ենք լեզու գտնում: Կարող եմ ասել, որ նա փիլիսոփայորեն այլ տեսակետ ուներ, քան ես: Կարծում եմ՝նա, գուցե, ավելի պակաս ոգեւորված էր.... Բայց ես զգում էի, որ մենք պետք է դա անենք: Ինձ չէր թվում, թե մենք այլընտրանք ունենք: Եթե մենք դա չանեինք, նրանք դա կանեին մեր դեմ», - ասել է ԱՄՆ նախագահը:

Ավելի վաղ ամերիկյան լրատվամիջոցները հայտնել էին, որ Վենսը լայնածավալ ռազմական գործողություններ սկսելու վերաբերյալ կասկածներ է ունեցել, ինչի պատճառով նրան դուրս են թողել Իրանի շուրջ որոշումների կայացման գործընթացից:

ԱՄՆ-ն եւ Իսրայելն Իրանի դեմ համատեղ ռազմական գործողություն են սկսել փետրվարի 28-ից՝ մեղադրելով Թեհրանին հրթիռային եւ միջուկային ծրագիրը զարգացնելու համար: Իրանը հերքել է մեղադրանքները եւ պատասխան հարվածներ է հասցնում Իսրայելին, ինչպես նաեւ տարածաշրջանի երկրներում էներգետիկ օբյեկտներին եւ ամերիկյան ռազմաբազաներին: Իրանում Իսրայելի եւ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների զոհերի թիվը գերազանցել է 1300-ը, Իսրայելը հայտնել է իրանական հարվածներից 10-ից ավելի զոհի մասին, ամերիկյան կողմից զոհվել է 7 զինծառայող: Մերձավոր Արեւելքի տարբեր երկրները հայտնել են, ընդհանուր առմամբ, շուրջ 25 զոհի մասին: Լիբանանում զոհերի թիվը հասել է 400-ի:

ԷՐԴՈՂԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, որ բանակցություններ է վարել 16 համաշխարհային առաջնորդի հետ՝ Իրանի շուրջ ստեղծված ճգնաժամը լուծելու ուղիներ գտնելու համար:

«Հակամարտության լուծման ուղիներ գտնելու նպատակով բանակցություններ են վարվել 16 համաշխարհային առաջնորդի հետ: Երկրի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը նույնպես այս կապակցությամբ բանակցություններ է վարել ավելի քան 50 գործընկերների հետ», - ինչպես հաղորդում է «ՌԻԱ Նովոստի»-ին, այս մասին Թուրքիայի նախագահն ասել է կառավարության նիստից հետո:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԲԵՌԼԻՆԱԼԵԻ ՃԳՆԱԺԱՄ

ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՀԱՋԱՆԳ

Իլքեր Չաթաքը, ով այս տարի Բեռլինի կինոփառատոնի գլխավոր մրցանակը շահեց իր «Դեղին տառեր» քաղաքական դրամայի համար, զգուշացնում է Բեռլինալեի համար վարքագծի կանոնագիրք մտցնելու հեռեւանքների մասին. «Սա ոչեմ է կոչվի իր իսկական անունով՝ գրաքննություն»:

Գերմանա-թուրք ռեժիսոր Իլքեր Չաթաքը, որի «Դեղին տառեր» ֆիլմը վերջերս արժանացավ Բեռլինի կինոփառատոնի գլխավոր մրցանակին՝ «Ոսկե արջին», մեկնաբանել է Գերմանիայի մշակույթի նախարարության առաջարկությունները, որոնք արվել են Բեռլինալեի տնօրեն Թրիշա Թաթլին աշխատանքից ազատելու սպառնալիքից հետո:

Թաթլի ղեկավարությունը սպառնալիքի տակ էր, երբ փառատոնի ներկայիս թողարկումը նախ խաթարվեց քաղաքական բանավեճի լռության քննադատությամբ, ապա մի քանի ռեժիսորների կողմից մրցանակաբաշխության ընդունելության ելույթների օգտագործմամբ՝ Գազայի վերաբերյալ պաղեստինամետ հայտարարություններ եւ մեկնաբանություններ անելու համար:

Թաթլը համերաշխության հզոր ալիք ստացավ՝ ոչ միայն ավելի քան 3000 կինոմասնագետներից, ովքեր ստորագրեցին բաց նամակ, որում նշվում էր, որ Բեռլինալեի ուժը «տարբեր տեսանկյուններ համատեղելու եւ բազմաթիվ ձայներ հնչեցնելու իր ունակության մեջ է»:

Թաթլին աջակցություն հայտնեցին նաեւ աշխարհի խոշորագույն կինոփառատոնների 32 ռեժիսորներ, այդ թվում՝ Կաննի նախագահ Թիերի Ֆրեմոն, որը ստորագրեց բաց նամակ, որում նշվում էր. «Մենք պետք է պահպանենք այն տարածքները, որտեղ անհարմարությունը ընդունվում է, որտեղ բանավեճը կարող է լայն լինել, որտեղ նոր գաղափարներ կարող են փոխանակվել եւ որտեղ անսպասելի, իսկ երբեմն էլ հակասական տեսակետներ են ի հայտ գալիս»:

Այս շաբաթ Բեռլինալեն հաստատեց, որ Թաթլը կմնա տնօրեն՝ վերահսկիչ խորհրդի նիստից հետո: Նիստն ավարտվեց KBB փառատոնի կազմակերպչական կոմիտեի կողմից մի շարք առաջարկությունների հրապարակմամբ, այդ թվում՝ վարքագծի կանոնագրքի ստեղծում, քաղաքականապես զգայուն բովանդակության հետ աշխատող անձնակազմի վերապատրաստում եւ տարբեր սոցիալական խմբերի, այդ թվում՝ հրեական համայնքի ներկայացուցիչների անկախ խորհրդատվական ֆորումի ստեղծում:

Գերմանական Bild տաբլոիդը, որը բացահայտորեն աջակցում է Իսրայելին, կեղծ կերպով պնդեց, որ Թաթլի շարունակական աշխատանքը կպահանջի Բեռլինալեից եւ նրա հյուրերից նոր «վարքագծի կանոնագիրք» ստորագրել:

Թաթլի հնգամյա պայմանագրի ժամկետին Բեռլինալեի տնօրենի պաշտոնում մնացել է երեք տարի, եւ բոլորի հայացքները ուղղված են փառատոնին եւ Գերմանիայի կառավարությանը, որին պաղեստինցի ռեժիսոր Աբդալլահ ալ-Խատիբը փակման արարողության ժամանակ մեղադրեց «Իսրայելի կողմից Ղազայում իրականացված ցեղասպանությանը գործընկեր» լինելու մեջ: Սա, մասնավորապես, հղում է Գերմանիայի իսրայելամետ դիրքորոշմանը, որը հիմնված է պատմական մեղքի բեռի վրա:

Բեռլինալեի հաղթող Չաթաքի «Դեղին տառերը» քաղաքական դրաման պատմում է թուրք նկարիչ զույգի մասին, որոնց ամուսնությունը վտանգի տակ է, երբ նրանք թիրախավորվում են պետության կողմից եւ կորցնում են իրենց աշխատանքն ու տունը: Ֆիլմը մեծ տպավորություն թողեց այս տարվա Բեռլինալեի հանդիսատեսի վրա՝ հատուկ գովասանքի արժանանալով իր ելույթների եւ Թուրքիայում քաղաքական բռնաճնշումների վերաբերյալ մեկնաբանությունների համար:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԵՐՍԿՍԵԼ Է

Մադրիդի «Ռեալի» եւ Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեն վերսկսել է մարզումներն Արքայական թիմում: Նա ծնկի բուժզննում անցնելու եւ բժշկական խորհրդատվություն ստանալու նպատակով մեկնել էր Փարիզ, հաղորդում է AS-ը: Մբապեն ծնկի վնասվածք ունի: Նրա մասնակցությունը անգլիական «Մանչեսթեր Սիթիի» դեմ Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի առաջին հանդիպմանը մարտի 11-ին քիչ հավանական է: Ընթացիկ մրցաշրջանում Մբապեն «Ռեալի» կազմում մասնակցել է 33 հանդիպման, խփել 38 գոլ:

ՏՈՒԳԱՆՔ

Անգլիական «Մանչեսթեր Սիթիի» իսպանացի կիսապաշտպան Ռոդրին տուգանվել է 80 հազար ֆունտ ստերլինգով մրցավարներին հրապարակային քննադատելու համար, հաղորդում է Անգլիայի ֆուտբոլային ասոցիացիայի մամուլի ծառայությունը: Անգլիայի Պրեմիեր լիգայի 24-րդ տուրում «Մանչեսթեր Սիթին» 2:2 հաշվով ոչ ոքի էր խաղացել «Տոտենհեմի» հետ: Հանդիպումից հետո Ռոդրին քննադատել էր մրցավար Ռոբերտ Ջոնսին «Տոտենհեմի» խաղացող Դոմինիկ Սոլանկեի խփած գոլը գրանցելու համար: «Մենք շատ հաճախ ենք հաղթել, եւ հիմա մարդիկ չեն ցանկանում, որ «Մանչեսթեր Սիթին» դարձյալ հաղթի, բայց մրցավարը պետք է լինի չեզոք»,- ասել էր Ռոդրին: Նշվում է, որ Ռոդրին ընդունել է իր մեղքը:

ՈՐԱԿԱԶՐԿՎԵՑ

«Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան որակազրկվել է երկու խաղով այս մրցաշրջանում 6-րդ դեղին քարտը ստանալու համար, հաղորդում է ESPN-ը: Նա զգուշացվել էր «Նյուքասլ Յունայթեդի» դեմ Անգլիայի գավաթի 1/8 եզրափակչի խաղում: «Մանչեսթեր Սիթին» հաղթել էր 3:1 հաշվով: Որակազրկումը չի անդրադառնա Անգլիական լիգայի գավաթի եզրափակչի վրա: «Մանչեսթեր Սիթին» մարտի 22-ին տիտղոսը կվիճարկի Լոնդոնի «Արսենալի» հետ դիմակայությունում: Գվարդիոլան բաց կթողնի Պրեմիեր լիգայի 30-րդ տուրի հանդիպումը «Վեստ Հեմի» դեմ (մարտի 14) եւ Անգլիայի գավաթի քառորդ եզրափակչի հանդիպումը: Անգլիայի առաջնության 29 խաղից հետո «Մանչեսթեր Սիթին» 60 միավորով երկրորդն է եւ առաջատար «Արսենալից» հետ է 7 միավոր:

ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է

Իսպանիայի առաջնության 27-րդ տուրում Բիլբաոյի «Աթլետիկին» խփած գոլի շնորհիվ Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» եւ Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականի եզրային հարձակվող Լամին Յամալը գերազանցել է «Բարսելոնայի» նախկին հարձակվող, արգենտինացի Լիոնել Մեսիի («Ինտեր Մայամի») ցուցանիշը: Լամին Յամալն աչքի էր ընկել 68-րդ րոպեին, «Բարսելոնան» հաղթել էր 1:0 հաշվով: Լամին Յամալը պաշտոնական հանդիպումներում խփել է 50-րդ գոլը 18 տարեկան եւ 237 օրականում: Յամալը 44 գոլ խփել է «Բարսելոնայի», 6 գոլ՝ Իսպանիայի հավաքականի կազմում:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՊՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է

Անվանի դիրիժոր Վահագն Պապյանը նշանակվել է Հայաստանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավարի եւ գլխավոր դիրիժորի պաշտոնում: Այս մասին հայտնում է Կամերային երաժշտության ազգային կենտրոնը:

Վահագն Պապյանը ծնվել է 1956 թվականին Երեւանում՝ արվեստագետների ընտանիքում: Նրա հայրը՝ Հայաստանի ժողովրդական նկարիչ Անատոլի Պապյանը, եւ մայրը՝ Հայաստանի վաստակավոր արտիստուհի Ամալյա Բայբուրթյանը, մեծ ազդեցություն են ունեցել ապագա երաժշտի գեղարվեստական ձեւավորման վրա՝ մանկուց նրան շրջապատելով արվեստի եւ մշակույթի մթնոլորտով:

Ստանալով հիմնարար երաժշտական կրթություն՝նա ավարտել է Երեւանի Պ. Ի. Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը: Հետագայում ուսումը շարունակել է Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում՝ դաշնամուրի բաժնում, որտեղ կատարելագործել է իր կատարողական վարպետությունը եւ ձեւավորվել որպես պրոֆեսիոնալ դաշնակահար: Դիրիժորական արվեստի խորացված ուսումնասիրության նպատակով նա նաեւ ավարտել է Սանկտ Պետերբուրգի (այն ժամանակ՝ Լենինգրադի) պետական կոնսերվատորիան՝ ստանալով դիրիժորի մասնագիտություն:

ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի կամերային նվագախումբը համերգային շրջագայությամբ հանդես է եկել Ֆրանսիայի Վալանս, Լիոն, Ռոման, Գրենոբլ, Մարսել, Նիցա քաղաքներում՝ հանդիսատեսի կողմից արժանանալով ջերմ ընդունելության եւ բարձր գնահատականի:

Ինչպես տեղեկանում ենք ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, շրջագայության ընթացքում երիտասարդ երաժիշտները ներկայացրել են համերգային ծրագիր, որը ներառում էր համաշխարհային դասական երաժշտության ճանաչված ստեղծագործություններ, ինչպես նաեւ հայ կոմպոզիտորների գործեր:

Հայ-ֆրանսիական նվագախումբը 2014 թվականից կազմակերպում է փոխայցելություններ՝համատեղ համերգներ Ֆրանսիայի ու Հայաստանի տարբեր քաղաքներում: Ծրագիրը ներառում է նաեւ վարպետության դասեր հայ եւ ֆրանսիացի մասնագետների հետ:

«Համերգային շրջագայությունը նպատակ ուներ ներկայացնելու Հայաստանի երաժշտական կրթության բարձր մակարդակը, ինչպես նաեւ նպաստելու հայ-ֆրանսիական մշակութային համագործակցության զարգացմանը: Նվագախմբին միացել են նաեւ ֆրանսիացի եւ հայ պատանի երաժիշտներ: Համատեղ համերգները դարձել են մշակութային երկխոսության կարեւոր հարթակ՝ միավորելով երաժշտասերներին եւ ստեղծելով նոր համագործակցությունների հնարավորություններ:

Ֆրանսիական շրջագայությունը կարեւոր քայլ էր հայ երիտասարդների կատարողական արվեստի միջազգային ներկայացման, ինչպես նաեւ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ մշակութային կապերի ամրապնդման գործում»,-նշված է հաղորդագրության մեջ:

● *Այսօր՝ժամը 19:00-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա ԿԱ ԴԱՆՍ անսամբլի համերգը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Հայկ Մխիթարյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար ներմուծման դեպքում ո՞րն է համարվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն:

Վարազդատ Հունանյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ծխախոտի արտադրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի եւ գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը համացանցից

Հավանաբար ինչ-որ մեկը որոշել է այսպես նվիրել մարտիության ծաղիկները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 8 - 12 - 1 + 3
	Կոտայքի լեռներ	- 7 - 11 - 1 + 2
	Կոտայքի նախալեռներ	- 2 - 5 + 3 + 6
	Գեղարքունիք	- 8 - 13 0 - 4
	Լոռի	- 2 - 7 0 + 4
	Տավուշ	- 3 - 6 + 1 + 4
	Արագածոտնի լեռներ	- 8 - 12 - 1 + 2
	Արագածոտնի նախալեռներ	- 1 - 6 + 2 + 6

	Արարատ	0 - 3 + 4 + 7
	Արմավիր	0 - 3 + 6 + 9
	Վայոց ձորի լեռներ	- 7 - 11 - 1 + 2
	Վայոց ձորի նախալեռներ	0 - 3 + 7 + 10
	Սյունիքի լեռներ	- 9 - 13 0 - 4
	Սյունիքի նախալեռներ	- 7 - 10 - 2 + 2
	Սյունիքի հովիտներ	- 2 + 3 + 5 + 8
	Երեւան	- 1 - 3 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*